Արձանագրություն N 2

<<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/21>> ծածկագրով ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքների, բարեկարգման, ցանկապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27.09.2017թ
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հովսեփյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մաթևոսյան/ գնահատող /
Ա. Քոչարյան /գնահատող/
Ն. Մարտիրոսյան / բացող /
Ն. Մանուկյան/ բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/21>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Ա. Հովսեփյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը 11:00-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 781 540 (յոթ հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	ք. Երևան, Նոր Նորք Բագրևանդի փ. 1/3, բն. 39	300 000	-	300 000

դ) Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի սեպտեմբերի 27-ին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/21>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ա. Հովսեփյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ

ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով ընթացակարգին ներկայացված հայտը գնահատվել են հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ա. Հովսեփյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/21>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Հովսեփյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից պատասխանն ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2017 թվականի հոկտեմբերի 4-ը ժամը 12:00-ն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Հովսեփյան

Անդամ՝ ---------- Ս. Մաթևոսյան

---------- Ա. Քոչարյան

---------- Ն. Մարտիրոսյան

---------- Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան